և այլ անուններ առած․ լեռներով շրջապատած է․ տափ ևս այս շղթայն այլ և այլ անուններով կը հանի Մասիս, որ կայ ուղղակի յարևելս կոյս։

Մինակ լեռներու հիւսիսային կողմն կայ Գանտիկը գեռան իսկ շղթային վերայ Ղզըլ—Զիարէթ (կարմիր ուխտ) լեռն, որ շղթայի վերան է, որոյ գագաթը կը գտնուի մատուռ մի, մատուռի տակից երկու ջրաղաց դարձնելու ջուր կը բղխի եղն։

ԿԻՐՃ (կետուկ)

Բագրեւանդ լեռնային է ընդհանրապէս և լեռնաշղթաներով փակուած է, տեղ տեղ կը տեսնուին անցքեր, որպէս դուռ ի հիւսիս կամ ի հարաւ կը բացուին, այս անցքեր ½-1 կամ 2 ժամ կերկարին երբեմն նեղ ու մութ ձորակով երկու կողմից անհնարինս բարձրացած ժայռերով շրջապատած․

Բագրեւանդայ շուրջն պատած լեռնաշղթայն եթէ պարիսպ համարենք, կիրճերն են նաև նորա երկաթեայ դռներն, որով արտաքին գաւառներու հետ յարաբերութեան մէջ կը մտնէ․ բաց ի Մուրատ կամ Արածանի գետի ընթացքէ, որ երկու ափերու վերայ ընդարձակ անցք թողած է, սակայն այն ևս պարապած են աջ կողմից ի Մուրատ իջնող Շեռեան և Քեսուկ գետերն։

1, Զիլուայ կետուկ, որ Խալեաղ լեռնահովտի

հայ գիւղացւոց հետ խառն, 1870 թուականներէն սկսեալ սկսան գաղթել իւրեանց ազգակցաց մօտ, որ հանգիստ կապրէին․ շատ անգամ, քրդական մեծ ցեղերու հետ ընդհարումներ կունենային․